

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ**

## «ՌԻՈ +20»-Ի ԳԼԽԱՎՈՐ ՁԵՌՔԵՐՈՒՄԸ «ԿԱՆԱՉ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»

*«Կանաչ տնտեսության» առաջնային նպատակն է նվազեցնել էկոլոգիական ռիսկերը: Այն սերտորեն կապված է էկոլոգիական տնտեսագիտության և «Կայուն Զարգացման» հետ, բայց ունի նաև քաղաքական մեծ ուղղվածություն:*

*Ըստ 2011 թվականի Շրջակա միջավայրի վերաբերյալ ՄԱԿ-ի ծրագրի զեկույցի՝ «Որպեսզի տնտեսությունը համարվի կանաչ, պետք է լինի ոչ միայն արդյունավետ, այլև արդար: Արդարությունը ենթադրում է սեփական կապիտալի ճանաչումը ամբողջ աշխարհի և երկրների մակարդակով: Մասնավորապես՝ ապահովել արդար անցում դեպի մի տնտեսության, որն ունի ածխածնի ցածր պաշարներ և դրանց արդյունավետ օգտագործում: Այս գաղափարները հանրայնացնելու համար ապրանքների վրա հայտնվեցին Կանաչ պիտակները, որպես շրջակա միջավայրի պահպանման խորհրդանիշեր: Այդ պիտակները ցույց են տալիս, որ գնված ապրանքները չեն վնասում կամ աղտոտում շրջակա միջավայրը և այն մարդկանց, ովքեր մասնակցում են դրանց արտադրման գործընթացին: Կանաչ պիտակների թիվը աստիճանաբար աճում է, և օգնում կառուցելու մի նոր՝ ավելի Կանաչ տնտեսություն: Այն կենտրոնանում է առավելապես տնտեսական (անտառտնտեսություն, հողագործություն, հանքարդյունաբերություն, ձկնորսություն) և էկոլոգիական (ջրային ռեսուրսների և կենսաբազմազանության պաշտպանություն, ջերմային գազերի արտանետումների կրճատում) գործոնների վրա: Կանաչ տնտեսությունը չի շրջանցում նաև աշխատողների սոցիալական պաշտպանությունը և նրանց իրավունքներին աջակցությունը:*